

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԴԸ ՍԱԼԻ
(1567-1622)

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԿՅԱՆՔԻ

ՍԱՍ Ե

ԳԼՈՒԽ Ա

Ինչպես նորոգվել հողով եւ վերահաստատվել
բարեպաշտության մեջ

Մենք կարիք ունենք ամեն տարի նորոգելու մեր բարի մտադրությունները: Մեր մարդկային բնությանը հատուկ է դրանք հեշտությամբ մոռացության մատնելը: Եթե մեր հողին համառորեն մշտապես իր ամբողջ զորությամբ չի ձգտում դեպի վեր, ապա մեր մարմնի հոռի հակումները ծանրաբեռնելով հողին՝ քաշում են նրան ներքև:

Այդ իսկ պատճառով, սիրելի բարեկամս, անհրաժեշտ է մշտապես թարմացնել Աստծուն ծառայելու որոշումներն ու մտադրությունները, քանի որ, հակառակ դեպքում, մենք հեշտությամբ կարող ենք ընկնել նախկին, եթե ոչ ավելի վատ, վիճակի մեջ:

Հոգևոր անկումների առանձնահատկությունն այն է, որ ընկնելիս մենք գլորվում ենք շատ ավելի ցած, քան հասցրել էինք բարձրանալ: Որքան էլ լավը լինի ժամացույցը, այն պետք է օրը երկու անգամ լարել՝ առավոտյան և երեկոյան: Բացի այդ, տարին գոնե մեկ անգամ քանդել, զննել, վերանորոգել, անսարք մասերը փոխարինել նորերով:

Ճիշտ նույնպես և նա, ում մտահոգում է իր սրտի վիճակը, պետք է ամեն օր, առավոտյան և երեկոյան, այն բանա Աստծու առջև և միշտ ուշադրությամբ հսկի նրան: Գոնե տարին մեկ անգամ անհրաժեշտ է հիմնովին, մանրազնիմ կերպով քննել սրտում բույն դրած կրքերն ու կապվածությունները, ուղղելու համար հայտնաբերած թերությունները:

Ժամագործը զգուշությամբ յուղում է ժամացույցի բոլոր անիվներն ու շարժվող մասերը՝ սարքի կանոնավոր աշխատանքը ապահովելու համար: Նույնպես և բարեպաշտ ամձը, սիրտը նորոգելու նպատակով, պետք է դիմի Արքայազան Խորհուրդների ներգործությանը /խոստովանություն և հաղորդություն/: Կվերականգնվեն նվաղած ուժերը, սրտին ջերմություն կհաղորդվի, հողում դարձյալ կծլարձակեն բարի մտադրությունները, և կծաղկեն առաքինությունները:

Սբ. Գրիգոր Նազիանզացու պատմածի համաձայն, հնում բոլոր

քրիստոնյաները ամեն տարի, Տիրոջ մկրտության օրը, նորոգում էին իրենց մկրտության ուխտադրությունները:

Առաջարկում եմ, որ մենք էլ նույնը անենք ամենայն լրջությամբ և պատրաստակամությամբ:

Հարմար ժամանակ գտիր և, խոստովանահորդ հետ խորհրդակցելուց հետո, հնարավորին չափ մեկուսանալով, խորհիր հետևյալ հարցերի շուրջ /հետևելով այս ուղեցույցի II մասում առաջարկված մեթոդին/:

ԳԼՈՒԽ Բ

Բարերարությունը, որ արեց Աստված՝ կոչելով մեզ ծառայելու իրեն

Ամենից առաջ հիշիր, որ դու կտրականապես և ընդմիշտ մերժել ես ամեն մի մահացու մեղք:

Երկրորդ՝ որ հոգով, սրտով, մարմնով, ամբողջ էությամբ նվիրվել ես Աստծու սիրուն և ծառայությանը:

Երրորդ՝ որոշում ես կայացրել, որ որևէ վատ, անվայել արարք թույլ տալու դեպքում անհապաղ դիմելու ես Աստծու օգնությանը, սխալ ուղղելու և այլևս չկրկնելու մտադրությամբ: Հիմա անդրադարձիր, թե որքան խելամիտ և սուրբ են քո կայացրած որոշումները:

Ստածիր և այն մասին, որ այս ամենը դու խոստացել ես Աստծուն: Եթե մարդկանց տրված խոստումները պարտավորեցնող են, ապա որքան ավելի են պարտավորեցնում Աստծուն տրված խոստումները: «Քանզի սիրտն իմ քեզ դիմեց, Տեր, երբեք չեմ մոռանալու խոսքերը Զո» /Սղմ. 26.8; 44.2; 118.16/:

Հիշիր, որ քո ուխտադրությունների վկաներն են եղել Աստվածամայրն ու բոլոր սրբերը: Ինչպիսի ուրախությամբ են ընդունել Վերին Երուսաղեմում քո որոշումները: Սուրբ Հոգին հասցրեց քո նավակը փրկարար նավահանգիստ: Դու երջանիկ ես, որ մանուկ հասակից ես կապվել Աստծու սիրո կապերով /Ուվսե 11.4/: Դու դեռ քնած էիր, իսկ Աստված հսկում էր քեզ և ներշնչում բարի խոհեր և զգացումներ /Երեմ. 29.11/:

Երանելի Օգոստինոսը միայն երեսուն տարեկանում դարձավ Աստծուն: Նա բացականցում էր. «Ո՛վ վաղնջական գեղեցկություն... Որքան ուշ ճանաչեցի ես Զեզ»: Ասա ուրեմն Դավիթ թագավորի հետ. «Աստված իմ, ինձ սովորեցրիր մանկությունից ի վեր, և այժմ էլ քո արդարությունը պիտի պատմեմ» /Սղմ. 70.17/: Դու ճաշակել ես աղոթքի բերկրանքը, մղվել Աստծուն սիրելու, հանդարտեցնելու՝ քեզ անհանգստացնող կրքերը, խուսափելու մեղքից և խղճի խայթից՝ Սրբազան Խորհուրդների շնորհիվ միանալով հավիտենական գթառատության Աղբյուրին: Որքան վեհասքանչ են այս շնորհները: «Չպիտի մեռնեմ, այլ պիտի ապրեմ և Տիրոջ գործերը պիտի պատմեմ» – ասում է Դավիթ թագավորը /Սղմ. 117.16–17/: Իմ սիրտը և իմ շուրթերը կպատմեն Աստծու ողորմության մասին:

Այս մտորումներին հավելիր բարի գործերն ու ջերմ աղոթքը: Խոնարհաբար աղաչիր Աստծուն ուժ և կարողություն տալ քեզ որոշումներդ ի կատար ածելու:

ԳԼՈՒԽ Գ

**Քննեցեք, արդյոք նկատվում է ձեր կյանքում առաջընթաց
բարեպաշտության մեջ**

Նման քննությունը ժամանակ է պահանջում: Այն հնարավոր չէ միանգամից իրականացնել, այլ մի քանի փուլով: Ստուգվելու է հետևյալը՝ 1/ ինչպես ես վերաբերվում Աստծուն; 2/ ինչպես ես վերաբերվում ինքդ քեզ; 3/ մերժավորներիդ; 4/ պայքարը կրթերի դեմ:

Այս քննության միայն սկիզբն ու վերջն է թելադրվում կատարել ծնկի եկած, մնացածը կարելի է անել և զբոսնելիս, և, նույնիսկ անկողնում, պայմանով, որ գտնվես սթափ վիճակում: Լավագույն տևողությունը 3 օր և 2 զիշերն է, ամեն օր տրամադրիր այնքան ժամանակ, որքան ի վիճակի ես: Երկարածգելու դեպքում դժվար է հասնել բավարար արդյունքի:

Քեզ բոլոր կետերով քննելուց հետո, նշիր, որտեղ ես առանձնակի կաղում, ինչում հաջողության չես հասնում, որպեսզի կարողանաս ճիշտ խորհուրդ ստանալ և համապատասխան որոշում կայացնել: Այդ օրերին խոսակցություններից բոլորովին հրաժարվել պետք չէ, բայց երեկոյան կողմ աշխատիր առանձնանալ, ավելի շուտ պառկել, որպեսզի մարմինն ու հոգին մտորումների համար անհրաժեշտ հանգիստը առնեն:

Օրվա ընթացքում հաճախակի դիմիր Աստծուն, Աստվածամորը, ամբողջ երկնային Երուսաղեմին: Պահպանիր Աստծու ներկայության մեջ գտնվելու զգացողությունը: Սուրբ Հոգուց լուսավորություն և հստակություն խնդրիր:

Երանելի Օգոստինոսը բացականչում էր. «Ո՛վ Տեր իմ, ինչպե՞ս եմ ճանաչում Քեզ և ինչպես եմ ճանաչում ինքս ինձ»: Ֆրանցիսկոս Ասիզացին նույնպես հարցնում էր Աստծուն. «Ո՛վ ես Դու և ո՞վ եմ ես»: Հաջողություններդ նշիր միայն Աստծուց գոհանալու համար:

Եթե տեսնում ես, որ քիչ ես առաջադիմել, կամ նույնիսկ հետ ես մնացել, մի թուլացրու ջանքերդ, մի վիատվիր, այլ ավելի ոգեշնչվիր, խոնարհվիր և վերացրու թերություններդ՝ Աստծու շնորհի ներգործությունը հայցելով: Որից հետո ինքությամբ և հանդարտորեն քեզ դիր համապատասխան տեղում:

ԳԼՈՒԽ Դ

Աստծու նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքի ստուգումը

Պահպանե՛լ ես դու ոչ մի պարագայում մահացու մեղք թույլ չտալու որոշումը: Այս որոշումը հոգևոր կյանքի հիմքն է:

Սիրո՞ւմ ես դու Աստծու պատվիրանները: Գուցե հակվածություն կամ կապվածություն ունես ինչ-ինչ մեղքերի նկատմամբ: Սիրո՞ւմ ես հոգևոր վարժությունները: Նրանք քեզ սրտենդություն չե՞ն պատճառում: Նրանցից որո՞նք են քեզ թվում ավել կամ պակաս գրավիչ և հաճելի՝ լսել Աստծու խոսքը, կարդալ, մտորել նրա շուրջ, անսալ հոգևոր խորհուրդների, գնալ խոստովանության, պատրաստվել հաղորդության, հաղորդություն ընդունել, սանձել, չափավորել սեփական ցանկություններն ու մտերմիկ հարաբերությունները:

Ինչի՞ց է առանձնապես խորշում քո սիրտը: Եթե հասկանաս, թե հատկապես որ աստվածապաշտական դրսևորմանն է ամենաքիչը հակված քո սիրտը, գիտի՞ր, ինչի՞ց է բխում այդ տհաճությունը, ո՞րն է պատճառը:

Ի՞նչ դիրք է գրավում սիրտդ, Աստծու համդեպ: Սիրո՞ւմ ես մտքով լինել Աստծու հետ, հաճելի՞ է քեզ հիշել Աստծուն: «Հիշեցի Աստծուն և ուրախացա», — ասել է սաղմոսերգուն /Սղմ. 76.4/: Դու զգո՞ւմ ես, որ քո սիրտը հիշողությամբ է սիրում նրան: Զգո՞ւմ ես արդյոք, որքան ուրախություն է բերում այդ սերը: Հիշվո՞ւմ է սիրտդ, երբ մտածում ես Աստծու և Նրա անսահման գթասրտության մասին:

Եթե աշխարհիկ հոգսերի և անցուդարձի մեջ հիշում ես Աստծուն, ինչպե՞ս է արձագանքում սիրտդ: Համակվո՞ւմ ես ջերմությամբ: Շրջվո՞ւմ ես Նրա կողմը: Գնո՞ւմ ես Նրան ընդառաջ:

Երբ սիրող կինը լուր է ստանում, որ ամուսինը վերադառնում է հեռուներից, նա այլևս չի կարողանում մտածել ուրիշ բաների մասին, եթե ամբողջ չի կարող գնալ դիմավորելու, նրա բոլոր մտքերը պտտվում են միայն սիրելիի վերադարձի շուրջ: Նույն զգացմունքներով է համակված և Աստծուն շատ սիրող անձը: Նա համարյա կորցնում է հետաքրքրությունը մնացած բոլոր բաների նկատմամբ, բացի Աստծուց:

Ի՞նչ տեղ է գրավում քո սրտում Հիսուս Քրիստոս, Աստված և Մարդ: Սիրո՞ւմ ես խորհել նրա մասին, թե մախընտրում ես մտքով թափառել ունայնության մեջ:

Ի՞նչ զգացմունքներ ես տածում Աստվածամոր, երկնային սուրբ հովանավորիդ, պահապան հրեշտակիդ համդեպ: Սրտանց սիրո՞ւմ ես, վստահո՞ւմ ես նրանց: Ի՞նչն է քեզ առանձնակի ձգում՝ նրանց կերպա՞րը, վա՞րքը, նրանց նվիրված եկեղեցական կանո՞նը: Սիրո՞ւմ ես շարականներ երգել, Աստծուն փառաբանել: Զո պաշտամունքի արտաքին դրսևորման ցանկություն ունե՞ս, օր.՝ զարդարել տաճարը /Սղմ. 25.8/: Առիթ ունեցե՞լ ես հրաժարվել որևէ մտերմությունից կամ կապվածությունից հանուն Աստծու: Սիրելիի համար որևէ բանից հոժարակամ հրաժարվելը սիրո արտահայտություն է: Ինչի՞ց ես գրկել քեզ հանուն Աստծու սիրո:

ԳԼՈՒԽ Ե

Սեր անձի հանդեպ ունեցած վերաբերմունքի ստուգում

Ինչպե՞ս ես սիրում ինքդ քեզ: Գուցե միայն այս աշխարհի համար ես սիրում: Չափից ավելի չե՞ս հոգում քո դիրքի մասին, կարծես մտադիր ես առհավետ մնալ այն աշխարհում: Այնի՞նչ, եթե սիրեիր քեզ երկնքի համար, ապա ամեն դեպքում հոժարությամբ կհամաձայնվեիր թողնել այս երկիրը, երբ Աստված կամենա:

Իսկական սերը պահանջում է, որ մենք հոգին մարմնից ավելի սիրենք, ավելի հոգ տանենք առաքիլություններ ձեռք բերելու մասին, քան այլ բաներ, որ երկնային փառքը մեզ ավելի հուզի, քան երկրայինը:

Իմաստուն սրտին հետաքրքրում է ոչ թե՝ ինչ կասես մարդիկ իր մասին, այլ՝ ինչ կասես հրեշտակները:

Սիրո՞ւմ են դու քո սիրտը: Օգնո՞ւմ են նրան իր տկարություններում: Դու պարտավոր են թողնել ամեն բան և օգնության հասնել, երբ կրքերը կեղեքում են նրան:

Ի՞նչ են կարծում, որպես ինչ են ներկայանում Աստծուն: Անկասկած՝ ոչինչ, որովհետև մի՞թե մեծ խոնարհություն է պահանջվում ավագահատիկից ճանաչելու իր ոչնչությունը սարի, կամ քրի կաթիլից՝ ծովի, կամ աննշան կայծից՝ արեգակի հետ համեմատվելիս: Խոնարհություն է այն, երբ չես գերազնահատում ինքդ քեզ ուրիշների հետ համեմատվելիս և չես ուզում, որ նրանք էլ քեզ գերազնահատեն: Ինչպիսի՞ն է քո դիրքը այս հարցում: Գուցե պարծենո՞ւմ են սեփական հնարամտությամբ: Չե՞ս շողոքորթում ինքդ քեզ քո մասին պատմելիս: Գուցե քեզ հաճույք է պատճառում անել այն, ինչ վնասում է առողջությանը: Ես նկատի ունեմ սին, անիմաստ հաճույքը, օր. առանց լուրջ պատճառի քնից զրկվելը և այլն:

ԳԼՈՒԽ Զ

Սերձավորների հանդեպ մեր ունեցած վերաբերմունքի ստուգումը

Ամուսնուն կամ կնոջը հարկ է սիրել հանդարտ ու հեզ, ամուր ու հաստատուն սիրով: Այդ է Աստծու կամքը: Նույնը կարելի է ասել և երեխաների, հարազատների, ընկերների հանդեպ սիրո մասին: Սակայն խորհիր, թե ինչպես է տրամադրված սիրտդ ընդհանրապես բոլորի հանդեպ: Սիրո՞ւմ են արդյոք նրանց հանուն Աստծու սիրո: Այս հարցին ճիշտ պատասխանելու համար մտովի պատկերացրու այն մարդկանց, ովքեր ծանծրույթ կամ սրտնեղություն են պատճառում: Այսպես է ստուգվում սերը մերձավորների հանդեպ, առավել ևս նրանց, ովքեր չարություն են անում մեզ խոսքով կամ գործով: Անկեղծորեն քննիր սիրտդ, շա՛տ դժվար է նրանց սիրելը: Դակվա՞ծ են ֆարդկանց մասին վատ արտահայտվելու, մանավանդ նրանց, ովքեր չեն սիրում քեզ: Ուղիղ կամ անուղղակի կերպով չարիք չե՞ս պատճառում մերձավորներիդ:

ԳԼՈՒԽ Է

Սեր անձի կապվածությունների ստուգումը

Դանդարտորեն շարունակիր զննել, թե ինչ վիճակում է սիրտդ: Ի՞նչ սխալներ են գործել: Գործը կարճելու համար քննությունը տար կրքերդ հայտնաբերելու ռազմությամբ: Ինչպիսի՞ն ենք եղել այս ընթացքում, ինչպե՞ս ենք դրսևորվել Աստծու, մերձավորի, սեփական անձի նկատմամբ: Ինչպե՞ս ենք վերաբերվել մեր մեջ ի հայտ եկած մեղքին և այն մեղքերին, որ նկատել ենք ուրիշների մեջ: Չէ որ մեր փափագը պիտի լինի, որ վերանան թե՛ մեր, թե՛ այլոց մեղքերը: Ինչպե՞ս ենք կարգավորել մեր ցանկությունները երկրային բարիքների, հաճույքների, պատիվների վերաբերյալ: Ինչի՞ց ենք ավելի շատ վախեցել՝ մեղք գործելուց, թե՛ երկրային բարիքներ կորցնելուց: Գուցե չափից ավելի՞ ենք հույս դրել աշխարհի և արարածների վրա: Դնարավոր է չափազանց մեծ վիշտ կամ ուրախություն ենք ապրել ունայն, ուշադրության ոչ

արժանի բաների համար: Ո՞ր կրքերն են տիրում մեր սրտին: Ի՞նչն է ամենից շատ վնաս պատճառում իրեն: Իրականում թե ինչ վիճակում է սիրտը, պարզ է դառնում կրքերը մեկը մյուսի ետևից ստուգելու դեպքում: Այդպես, երաժիշտը ջութակը լարելիս հերթականությամբ ստուգում է բոլոր լարերը, ձգելով կամ թուլացնելով այն լարերը՝ որոնք անմերդաշնակ են հնչում:

Այսպես, մեկ առ մեկ քննելով սերը, ատելությունը, ցանկությունները, վախը, տխրությունը և ուրախությունը, մենք կարող ենք եզրակացնել, որն է անհրաժեշտ թուլացնել կամ գորացնել Աստծու փառքի համար Աստվածային շնորհի օգնությամբ և հոգևոր հոր խորհուրդներին հետևելով:

ԳԼՈՒԽ Ը

Ինչ է պետք անել ինքնագնումը ավարտելուց հետո

Այն բանից հետո, երբ ամեն ինչ քննեցիր և տեսար, թե որտեղ ես գտնվում, գոհացիր Աստծուց քո նկատած հաջողությունների համար՝ համարելով, որ նրանց Աստծու ողորմածության արտահայտությունն են քո հանդեպ:

Խոնարհվիր Աստծու առջև՝ գիտակցելով, որ առաջընթացդ շատ չնչին է, որի պատճառը քո սեփական ծուլությունն է: Դու ճշտորեն, արիաբար և համառորեն չես կատարել այն ամենը, ինչ պատվիրվում և ներշնչվում էր Աստծու կողմից: Ներում հայցիր Նրանից քո անհավատարմության համար, աղաչիր քեզ հավատարիմ դարձնել: Համձնիր Նրան քո սիրտը, Նրան քո Տերը խոստովանիր: Աղոթքով դիմիր Աստվածամորը, պահապան հրեշտակիդ և բոլոր սրբերին:

ԳԼՈՒԽ Թ

Խորհուրդներ՝ որոշումներդ վերահաստատելու մասին

Ինքնագնումդ ավարտելուց և խոստովանահորդ հետ քո թերությունների և նրանց դեմ պայքարելու միջոցների մասին խորհրդակցելուց հետո, որպես հիմք քո ամենօրյա խոկումների համար, վերցրու հետևյալ ցուցումները /ըստ գրքի / մասում շարադրված մեթոդի/:

ԳԼՈՒԽ Ժ

Խորհրդածություն առաջին.
Հոգու կատարելության մասին

Խորհիր հոգու ազնվության և կատարելության մասին: Այն ընդունակ է ոչ միայն ճանաչել տեսանելի աշխարհը, այլ նաև իմանալ դրախտի և հրեշտակների գոյության մասին, նրան հայտնի է, որ կա բարձրյալ Աստված, Գթառատ և Աճառելի, որ կա հավերժություն, Գիտի, թե ինչ է հարկավոր այս տեսանելի աշխարհում ճիշտ ապրելու, իսկ հավիտենականության մեջ՝ Աստծուն և հրեշտակներին միանալու համար:

Մեր անձը օժտված է կամքով, որն այնքան վեհ և ազնիվ է, որ ընդունակ է սիրել Աստծուն: Ինչպես մեղուն հանգստանում է միայն ծաղիկների վրա,

այնպես էլ հոգին կարող է իր հանգիստը գտնել միայն Աստծու, այլ ոչ թե արարածների մեջ: Փորձիր վերհիշել նախկին զբաղմունքներդ և զվարճություններդ և ասա, մի՞թե նրանք լեցուն չէին ամախորժ տագնապներով, տանջալից մտածումներով և ծանծրացնող հոգսերով, ինչից քո խեղճ սիրտը մշտապես իրեն դժբախտ էր զգում: Ավա՜ղ, մեր սիրտը ձգտում է դեպի արարածները, շտապում նրանց մոտ՝ հույս ունենալով գոհացում տալ իր ցանկություններին, բայց շատ շուտով համոզվում է, որ ոչ մի բանից բավարարվածություն չի ստանում: Աստված կամենում է, որ սիրտը հանգիստ չգտնի Իրենից դուրս: Երբ աղավճին դուրս էր թռչում Նոյյան տապանից /Օճ. 8.9/, նա պետք է վերադառնար իր Աստծու մոտ: Ինչ բնական գեղեցկությամբ է օժտված մեր սիրտը: Ուրեմն ինչո՞ւ ենք ստիպում նրան իր կամքին հակառակ ծառայելու արարածներին: «Ով իմ հրաշալի հոգի,— կասես դու,— դու կարող ես փափագել և հասկանալ Աստծուն: Ինչո՞ւ ես ապա գերվում շատ ավելի քչով: Դու կարող ես հավիտենականություն ձեռք բերել, ինչո՞ւ ես ընկնում ակնթարթայինի հետևից: Անառակ որդին կարող էր երջանիկ ապրել հոր տանը, այնինչ անասունների հետ փշրանքներ էր հավաքում /Դուկա. 15.16–17/: Ո՛վ իմ հոգի, դու ի վիճակի ես ճանաչելու Աստծուն, ինչո՞ւ ես բավարարվում այսքան չնչին բաներով»: Հիշեցրու հոգուդ, որ նա հավիտենական է և արժանի հավիտենականության: Ներշնչիր նրան արիություն և կատարելության ձգտում:

ԳԼՈՒԽ ԺԱ

Խորհրդածություն երկրորդ.

Առաքինությունների կատարելության մասին

Խորհիր այն մասին, որ աշխարհում հոգուն գոհացում կարող են տալ միայն առաքինությունն ու աստվածաշնորհությունը: Տես, որքան հրաշալի են նրանք: Հակադիր առաքինությունը ախտին: Որքան հրաշալի է համբերությունը համեմատած ռիսկալության, հեզությունը՝ չարության, խոնարհությունը՝ սնապարծության, գորովագութ սերը՝ նախանձի, ժուժկալությունը՝ շվախության հետ: Առաքինությունը բերկրանք և խաղաղություն է հաղորդում հոգուն, իսկ ախտը՝ թողնում անգոր ու անարգված:

Նա, ով թեկուզ մի փոքր տեղիք է տալիս ախտերին, չի կարող լիովին գոհ լինել, իսկ ծանրագույն ախտեր կրողը՝ ընդհանրապես երբեք չի գոհանում:

Այնինչ նույնիսկ ամենշան առաքինությունը գոհունակության զգացում է արթնացնում, որն աճում է առաքինության բազմապատկելուն զուգահեռ:

Բարեպաշտ կյանքն այնքան սքանչելի է, որ նրան հաղորդ եղողը կարող է ասել սամարացի կնոջ հետ. «Տեր, տուր ինձ միշտ այդ քուրը» /Բովի. 4.15/:

ԳԼՈՒԽ ԺԲ

Խորհրդածություն երրորդ.

Սրբերի օրինակները

Ուշադրություն դարձրեք սրբերի ընթացքին. ինչ ասես, որ չեն արել, որպեսզի սովորեն սիրել Աստծուն և ամբողջ էությամբ նվիրվել Նրան: Նայեք

անպարտելի, աներկյուղ մարտիրոսներին՝ ինչ կտանքների են ենթարկվել, բայց գերադասել են մեռնել, քան ուրանալ Աստծուն: Ինչպիսի խիզախություն և հաստատակամություն են ցուցաբերել թույլ կամայք և երեխաները: Նայեք սուրբ վկաներին: Որքան մեծ էր նրանց արհամարհանքն աշխարհի հանդեպ: Ոչ մի խոշտանգում չէր կարող խախտել նրանց կայունությունը: Ինչ պայքարի և տանջանքների միջով էին անցնում նրանք, միայն թե հավատարիմ մնան Աստծուն: Հիշիր, թե ինչպես էր խոսում Օգոստինոսը իր մոր՝ Սոնիկայի մասին, Հերոնիմոսը՝ Պաուլայի: Նրանք ծգտում էին նույն Աստծուն, նույն առաքինություններին: Ինչու՞ մենք նույնպես չենք վարվում մեր պարագայում:

ԳԼՈՒԽ ԺԳ

Խորհրդածություն չորրորդ.

Հիսուս Զրիստոսի բերած սիրո մասին

Տեսեք, ինչ մեծ սիրով էր տոգորված Հիսուս Զրիստոս Գեթսեմանիի պարտեզում և Գողգոթայում մեզ համար տանջվելիս: Խաչի վրա տառապանք կրելիս նա սիրում էր մեզանից յուրաքանչյուրին: Մենք կարող ենք ասել երեմիա մարգարեի հետ. «Ով Աստված, դեռ ինձ որովայնում չստեղծած, Դու տեսնում էիր ինձ և անունով կանչում» /Երեմ. 1.5/:

Իր անսահման աստվածային ողորմությամբ նա ամեն ինչ պատրաստել է մեր փրկության համար: Այդպես, հոգատար մայրը, նախքան երեխայի ծնվելը, ամեն ինչ պատրաստում է նրա համար: Այդպես և Տերը խաչի վրա ամեն բան կատարեց մեզ համար: Տերը քո հոգու մասին մտածում էր այնպես, կարծես ուրիշ ոչ ոք եղած չլիներ աշխարհի երեսին, ում համար պետք էր հոգ տանել: Նա պատրաստեց մեզ համար փրկության հազարավոր միջոցներ: Արեգակը ամեն մի փոքրիկ վայր երկրի վրա լուսավորում է այնպես, կարծես իր ողջ լույսն ու ջերմությունը հեղում է միայն այնտեղ:

Պողոս առաքյալը միշտ կրկնում էր. «Նա սիրեց ինձ և իրեն մահվան մատնեց ինձ համար» /Գաղ. 2.20/: Ահա թե որ խոսքերը պիտի դրոշմենք մեր սրտերում, որպեսզի երբեք ետ չկանգնենք մեր որոշումներից:

ԳԼՈՒԽ ԺԴ

Խորհրդածություն հինգերորդ.

Մարդու հանդեպ Աստծու հավիտենական սիրո մասին

Աստված սիրեց մեզանից յուրաքանչյուրին հավերժության մեջ: Նա սիրում էր մեզանից յուրաքանչյուրին նախքան Հիսուս Զրիստոսի՝ համայն մարդկության փրկության համար խաչի վրա չարչարվելը: Նա խոսում է մարգարեի բերանով՝ դիմելով մեզանից ամեն մեկին. «Հավիտենական սիրով սիրեցի քեզ, դրա համար էլ քեզ գթության արժանացրի» /Երեմ 31.3/: Ամբողջ աշխարհը մեկ հոգի չարժե, իսկ հոգին ոչինչ է առանց ծգտումի առ Աստված, առանց Նրան ծառայելու վճռականության:

ԳԼՈՒԽ ԺԵ

Ընդհանուր խոհեր և ամփոփում

Ո՛վ սքանչելի վճռակաճություն... Դու մման ես կենաց ծառի, որ Ինքը Տերն է տնկել իմ պարտեզում և պատրաստ է ոռոգել Իր Ամարատ Արյամբ, որպեսզի այն արժանի պտուղներ բերի: Լավ է հազար անգամ մեռնել, քան թույլ տալ արմատահան անել այն իմ սրտից: Ո՛չ սնապարծությունը, ո՛չ վայելքները, ո՛չ հարստությունը, ո՛չ կյանքի պատահարները ի վիճակի չեն խափանելու իմ որոշումները: Դու Ինքդ ես, Տեր իմ, տնկել այդ ծառը հավերժության մեջ և պահպանել իմ պարտեզի համար՝ որքա՛ն շատերն են զրկված այդ ողորմությունից:

Ով սքանչելի և սուրբ վճռակաճություն, եթե բնակվես իմ հոգում, իմ հոգին կապրի քո մեջ, եթե ես քեզ չկորցնեմ, դու կպահես, կապրեցնես ինձ:

Ստածիր, թե ինչ միջոցներով կարող ես պահպանել հավատարմությունդ, հաճախակի աղոթքով, Արքայազան խորհուրդներով, բարի գործերով, սեփական սխալներն իսկույն ևեթ ընդունելով, քեզ տված խորհուրդները կատարելով: Աղերսիր Աստծուց հոգուդ նորոգություն պարգևել: Դարձյալ, ինչպես և սկզբում, դիմիր խոստովանության և Սուրբ Դադորդության:

ԳԼՈՒԽ ԺԶ

Ինչ զգացմունքներ է հարկավոր պահպանել ինքնազննումը ավարտելուց հետո

Կրկնիր Պողոս առաքյալի խոսքերը. «Ապրեմ թե մեռնեմ, Տիրոջն եմ» /Բռոմ. 14.8/: Իմ ունեցածն էլ իմը չէ: Թող քո մեջ նոր սիրտ գոյանա, և քեզ բազմիցս խաբած աշխարհն այս անգամ ինքը խաբվի: Այն չի նկատի քո մեջ կատարված փոփոխությունը, կշարունակի կարծել, որ սա դեռ եսա՛վն է, այնինչ դու արդեն Դակոբն ես: Այս ամենը կատասպարվի քո սրտի խորքում, դու կանցնես քո սովորական գործերին և պարտականություններին՝ հետևելով սակայն, որ որոշումներդ ներթափանցեն հոգուդ բոլոր անկյունները:

ԳԼՈՒԽ ԺԷ

Պատասխան այն երկու առարկություններին, որ հնարավոր են այս ուղեցույցի կապակցությամբ

Աշխարհը քեզ կհանդիմանի, որ այս գրքում այնքան շատ են խորհուրդները, որ նրանց կատարելու համար հարկ կլինի թողնել բոլոր մնացած գործերը: Դա ամենևին էլ այդպես չէ: Քաղաքացիական օրենքներն էլ քիչ չեն, որոնց պետք է միշտ հետևել, բայց չէ որ նրանցից յուրաքանչյուրը գործադրվում է համապատասխան իրավիճակում:

Լյուդովիկոս IX արքան պետություն էր ղեկավարում, ինչը ամենևին չէր խանգարում նրան կատարել այն ամենը, ինչի մասին գրված է այստեղ:

Դու նույնպես մի վարանիր հետևել այս հրահանգներին, և Աստված քեզ բավական ուժ ու ժամանակ կտա, որ հասցնես բոլոր գործերդ: Եթե մեր հույսը Աստծու օժանդակության վրա է, միշտ էլ հասցնում ենք անել, ինչ մեզմից պահանջվում է:

ԳԼՈՒԽ ԺԸ

Այս ուղեցույցի վերջին և կարևոր խորհուրդները:

Ամեն ամիս 3 օր տրամադրիր անելու այն, ինչի մասին խոսվում է գրքի I մասում: Կրկնիր Դավիթ թագավորի խոսքերը. «Հավիտյան չպիտի մոռանամ ջո արդարությունները, քանզի դրանցով ինձ պահպանեցիր» /Սղմ. 118.93/: Բացահայտորեն խոստովանիր, որ ձգտում ես բարեպաշտ կյանքի, մի ամաչիր այն գործերից, որոնք նպաստում են դրան: Աստված կամենում է, որ չթաքցնենք մեր նկրտումները, չամաչենք ո՛չ Նրանից, ո՛չ Նրա խաչից:

Բացի այդ, մեր ակնհայտ դիրքորոշումը կանխում է աշխարհի շատ հարձակուներ, իսկ մեզ ստիպում ամբիժ պահել մեր բարի անունը: Փիլիսոփաները հնում ամենևին չէին թաքցնում, որ փիլիսոփա են, և նրանց իրավունք էր վերապահվում ապրել իրենց զբաղմունքին համապատասխան կյանքով:

Մենք նույնպես հայտնապես ասենք, որ ձգտում ենք աստվածաշատության, որպեսզի մեզ հնարավորություն տրվի ապրել մեր նախընտրած ձևով: Եթե քեզ առարկեն, որ բարեպաշտ կարելի է լինել և առանց այս խորհուրդներն ու վարժությունները կատարելու՝ մի ժխտիր: Պարզապես բացատրիր, որ դու ես շատ տկար ու անզոր և կարիք ունես նման աջակցության, որի կարիքը ավելի զորավորները կարող են և չզգալ:

Բայց թախանձում եմ քեզ, առանց այլևայլի շարունակիր բռնած գործդ և հաստատվիր բարեպաշտության մեջ: Մեր օրերը սահում անցնում են: Սահը կանգնած է դռանը: Սուրբ Գրիգոր Նազիանզացին ասում է. «Ահա շեփորը ազդարարում է նահանջը: Յուրաքանչյուրը թող պատրաստվի, դատաստանը մեծ է»:

Մարտիրոսներից մեկի մայրը, տեսնելով, որ որդուն տանում են տանջելու, բացականչեց. «Որդիս, հիշիր հավիտենական կյանքի մասին»:

Ես նույնպես ասում եմ քեզ, իմ սիրելի բարեկամ, նայիր երկնքին և մի լքիր այն հանուն երկրի: Տես դժոխքը և մի նետվիր նրա մեջ և ոչ մի վարկյանով: Հայացքդ ուղղիր Հիսուս Զրիստոսին և մի ուրացիր նրան հանուն աշխարհի: Եթե բարեպաշտ կյանքը երբեմն և դժվարին թվա, հիշիր Հրանցիսկոս Ասիզացու երգը.

Ես սպասում եմ հավիտենական երջանկության,

Իմ հույսն՝ Աստված է:

Որքան էլ ժամը է ճանապարհը,

Նպատակը՝ Տիրոջը հասնելն է:

Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն

Ամեն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մահվան նախապատրաստվելու մասին

«Արթուն կացեք և աղոթեցեք, որովհետև չգիտեք ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը, երբ կգա մարդու մրդին» /Մտք. 25.13/: Այս փրկարար հորդորին անսալով, շատերը ամսվա մեջ մեկ օր են ընտրում և առանձնանում երանավետ վախճանին նախապատրաստվելու նպատակով:

Այս սրբազան վարժությանը հատկացրու որևէ սովորական կամ տոնական օր: Նախապես երեկոյան, մահվան վերաբերյալ որևէ հոգևոր գրվածք ընթերցիր և, այսպիսով, խորհրդածելու նյութ ունենալով, պառկիր քնելու այն մտածումով, որ վաղվա օրը վերջինն է լինելու քո կյանքում: Առավոտյան գոհացիր Աստծուց, որ քեզ դեռ ժամանակ է տրվում ապաշխարհությանը մեղքերից մաքրվելու:

Աշխատիր այնպես կատարել ընթացիկ գործերդ, ինչպես կցանկանայիր անել հենց մահվանդ օրը, և աշաղջորեն հետևիր, թե ինչը քեզ ամենաշատը վիշտ կպատճառեր, եթե իսկապես այդ օրը մեռնելու լինեիր:

Եթե կյանքիդ հետադարձ հայացք ձգելուց հետո ի հայտ բերես քեզ տանջող ինչ-որ մեղքեր, ապա նորից անկեղծորեն խոստովանիր դրանք, որպեսզի թեթևացնես խղճմտանքդ: Երկյուղածությամբ մասնակցիր Սուրբ Պատարագին և մեծագույն զոհը մատուցելու պահին հայցիր Փրկչից քեզ քրիստոնեական վախճան պարգևել: Եթե պարագաները ներում են, հաղորդվիր Սուրբ Մարմնին և Արյանը՝ այնպիսի զգացողությամբ, կարծես մահվանդ պահին ես հաղորդվում*: Այս մեծագույն ողորմությանը արժանանալուց հետո, լուռ ունկնդրիր քո սրտում Նրա ձայնին, երկրպագիր Նրան ամենայն ակնածանքով, հավատքով, հույսով, սիրով, փշրված սրտով, խոստացիր առանց վարանելու կատարել այն ամենը, ինչ Նա կկամենա ներշնչել քեզ:

Օրվա ընթացքում զբաղվիր հոգեշահ գրքերի ընթերցանությամբ: Երեկոյան առանձնացիր քո սենյակում և գոնե մեկ ժամ տրամադրիր խորհրդածելուն հետևյալ կերպ.

Ամենից առաջ ծնկի արի և խնդրիր Սուրբ Դոգու լուսավորությունը՝ տեսնելու քո բոլոր ախտերը և նրանցից բժշկվելու: Դետո նստած կամ քայլելով մտորիր հետևյալ կետերի շուրջ.

ա/ Ինչպե՞ս ես ապրել մինչ այս ժամը: Կուզենայի՞ր մեռնել այն հոգեվիճակում, որում գտնվում ես:

բ/ Դատկապես ի՞նչ շնորհների և ողորմությունների է արժանացրել քեզ Աստված: Իչպե՞ս ես վարվել նրանց հետ մինչ այս պահը:

գ/ Ո՞րն է քեզ իշխող մեղքը: Ո՞ր մեղքերի մեջ ես ավելի հաճախ ընկել անցած ամսվա ընթացքում: Աշխատիր հասկանալ պատճառները, պարզել հետևանքները և միջոցներ գտնել հետագայում այդ մեղքերից խուսափելու համար:

դ/ Լավ հիշիր, թե ինչպես մտադրվեցիր պայքարել այն արատի դեմ, որը քո հատուկ քննության նյութն էր: Որոշիր, ո՞ր նյութն է լինելու քո ուշադրության կենտրոնում գալիք ամսվա ընթացքում:

ե/ Դակիր՞ գրի առ քո մտադրությունները:

Մտորումներիդ ավարտին, դարձյալ ծնկի իջիր, շնորհակալություն հայտնիր Աստծուն իր բոլոր ողորմությունների համար անձամբ քո հանդեպ և խոստացիր հավատարմորեն պահել քո բարի մտադրությունները:

Ի վերջո, սովորական երեկոյան աղոթքից և խիղճդ քննելուց հետո կարող ես մտովին նորից հաղորդվել Սուրբ Մարմնին և Արյանը:

* Կաթոլիկ եկեղեցում Սուրբ Պատարագ մատուցվում է ամեն օր: